

Լրացուցիչ տեղեկություններ պարունակող ծանուցում Ձեր իրավունքները և նպաստները «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագիր փոխադրվելիս

2024 թ. հունվարի 1-ից «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրն այլևս «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր չի լինելու Ձեր շրջանում: Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրում են ընդգրկվելու: Այս փոփոխությունը «Medi-Cal»-ի ամբողջ նահանգում տեղի ունեցող փոփոխությունների մաս է կազմում: 2024 թվականից «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերը նոր կանոններով են գործելու: Դրանց նպատակն է առողջապահությունն ավելի արդար, բարձրակարգ, մատչելի, հաշվետու և թափանցիկ դարձնել: Որպես այդ գործընթացի մաս՝ 2024 թ. հունվարի 1-ից «Medi-Cal»-ի որոշ առողջապահական ծրագրեր փոխվելու են:

«Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագիր փոխադրվելը **չի** ազդում «Medi-Cal»-ի Ձեր իրավունակության և նպաստների վրա: Ստորև կարդացեք այս փոփոխության մասին հարցերի պատասխանները:

Ընդհանուր հարցեր

1. Կարո՞ղ եմ ես պահել իմ բժշկին, եթե նա ընդգրկված չէ «Medi-Cal»-ի իմ նոր առողջապահական ծրագրի ցանցում (խմբում):

Եթե անցյալ **12 ամիսների** ընթացքում Դուք այցելել եք «Medi-Cal»-ի մի բժշկի, որը «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրում ընդգրկված չէ, հնարավոր է, որ կարողանաք պահել Ձեր բժշկին, եթե «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրից «չընդհատվող խնամք» (continuity of care) խնդրեք:

Չընդհատվող խնամքը նշանակում է, որ «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո Դուք կարող եք մինչև 12 ամիս պահել «Medi-Cal»-ի սպասարկողին: Դա վերաբերում է Ձեր նախնական բուժսպասարկման բժշկին (PCP), մասնագետներին, ֆիզիոթերապևտներին, աշխատաբույժներին և ուրիշներին:

Ձեր բժիշկը կարող է համաձայնել աշխատակցել «Medi-Cal»-ի ձեր նոր առողջապահական ծրագրի հետ: Դա կարող է տևել մինչև 12 ամիս կամ, որոշ դեպքերում, ավելի երկար: Եթե Ձեզ չընդհատվող խնամք է հարկավոր, «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին: Եթե Ձեր բժիշկը չհամաձայնի աշխատել «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի հետ, «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիրը կօգնի Ձեզ նոր բժիշկ գտնել:

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի Ձեզ հասանելի ընտրության տարբերակների, ինչպես նաև «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի հետ համագործակցող բժիշկների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար անցեք www.healthcareoptions.dhcs.ca.gov:

2. Ի՞նչ անել, եթե ես արդեն ժամադրություններ ունեմ նշանակված 2024 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո:

Ձեր ներկա սպասարկողի հետ միասին ժամադրությունները համաձայնեցրեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի հետ: Ձեր սպասարկողին կարող է անհրաժեշտ լինել «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի համաձայնությունը ստանալ՝ նախքան Դուք նոր այցելություններ կկատարեք կամ ծառայություններ կստանաք:

3. Կարո՞ղ եմ ես պահպանել «Medi-Cal»-ի մասնագետի մոտ նշանակված ժամադրությունները:

Եթե Դուք մինչև «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրին անդամագրվելն եք ժամադրություն ստացել «Medi-Cal»-ի մասնագետի մոտ, հնարավոր է, որ կարողանաք պահպանել այդ ժամադրությունը:

Նոր ծրագրին անդամագրվելուց հետո զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին: Հարցրեք, թե արդյոք կարող եք պահպանել այդ ժամադրությունը: Հնարավոր է, որ այդ մասնագետն արդեն աշխատում է «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի հետ: Կամ նա կարող է ապագայում համաձայնել աշխատել «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի հետ:

4. Իմ դեղատոմսերն ու դեղատները կփոխվեն:

Ոչ: «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը փոխելիս Ձեր դեղատոմսերն ու դեղատները **չպետք է** փոխվեն: Եթե Դուք PCP ունեք, անպայման տեղյակ պահեք նրան, թե այժմ ինչ դեղատոմսային դեղեր եք ընդունում: Եթե հարկավոր լինի լրացնել Ձեր դեղերի պաշարը, նրան տեղյակ պահեք: Եթե Դուք «Medicare» ունեք, Ձեր Դեղատոմսային դեղերի ծրագիրը (Prescription Drug Plan) (Part D) կշարունակի տրամադրել Ձեզ դեղատոմսային նպաստները:

5. Եթե ես երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ (DME) ունեմ, կարո՞ղ եմ պահել դրանք «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրում ընդգրկվելուց հետո:

Դուք կկարողանաք մինչև 180 օր պահել Ձեր DME-ը: «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին: Ասացեք, որ երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ ունեք:

6. Եթե «Medi-Cal»-ը վճարում է իմ փոխադրման համար, կարո՞ղ եմ ես պահպանել նշանակված փոխադրումները:

Եթե Ձեզ նշանակված է Non-Emergency Medical Transportation (NEMT) կամ Non-Medical Transportation (NMT), Դուք կշարունակեք ստանալ այդ ծառայությունները: Եթե Ձեր արտոնված փոխադրման ծառայությունը **2024 թ. հունիսի 30**-ից հետո լինի, «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին: 2024 թ. հունիսի 30-ից հետո Ձեր ծառայությունը պահպանելու համար Ձեզ կարող է անհրաժեշտ լինել այցելել Ձեր բժշկին և բուժման նոր ծրագիր կազմել:

Ձեր բժշկին այցելելուց առաջ նախ զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիր: Հարցրեք, թե արդյոք Ձեր փոխադրողն ընդգրկված է «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրում: Եթե ոչ, «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիրը 2024 թ. հունվարի 1-ից Ձեզ նոր փոխադրող կնշանակի:

7. «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո ինձ անհրաժեշտ կլինի՞ նոր արտոնություն ստանալ «Medi-Cal»-ի այն ծառայությունների համար, որ այժմ ստանում եմ:

Ոչ: Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ ծառայության համար արտոնություն եք ստացել Ձեր ներկա PCP-ից կամ բժշկից, կարող եք շարունակել տվյալ արտոնությամբ ստանալ այդ ծառայությունը: Եթե Ձեր արտոնության ժամկետն անցնում է 2024 թ. հունիսի 30-ից, «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին: 2024 թ. հունիսի 30-ից հետո Ձեր ծառայությունը պահպանելու համար Ձեզ կարող է անհրաժեշտ լինել այցելել Ձեր բժշկին և բուժման նոր ծրագիր կազմել:

Եթե Դուք «Medi-Cal»-ի այնպիսի ծառայություն կամ բուժում եք ստանում, որի համար անհրաժեշտ չէ արտոնություն ստանալ «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրից, ապա «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո կարող եք շարունակել ստանալ այդ ծառայությունը կամ բուժումը: Եթե 2024 թ. հունիսի 30-ից հետո Ձեզ անհրաժեշտ է շարունակել ստանալ այդ ծառայությունը կամ բուժումը, «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին: Հարցրեք, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է արտոնություն ստանալ, որպեսզի շարունակեք ստանալ այդ ծառայությունը կամ բուժումը:

8. Ի՞նչ անեմ եթե հաշիվ ստանամ վճարման համար:

Եթե Դուք հաշիվ ստանաք Ձեր սպասարկողից կամ «Medi-Cal»-ի Ձեր ներկա առողջապահական ծրագրից, զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիր: Նրանք կասեն, թե արդյոք անհրաժեշտ է վճարել: Եթե Դուք առանց «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի արտոնության եք ծառայությունը ստացել ծրագրի ցանցում չընդգրկված բժշկից, ապա հնարավոր է, որ ստիպված լինեք վճարել Ձեր ստացած հաշիվը:

Եթե Դուք հաշիվ ստանաք այնպիսի մի ծառայության համար, որը ստացել եք «Medi-Cal»-ի Ձեր **նոր** առողջապահական ծրագրից, զանգահարեք ծրագիր և պարզեք, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է վճարել դրա համար:

«Medi-Cal»-ի այն անդամների համար, որոնք նաև «Medicare» ունեն

9. Ես «Medicare»-ում ընդգրկված կմնամ:

Այո: Եթե Դուք «Medicare» ունեք, ապա «Medicare»-ի Ձեր նպաստները, սպասարկողները և «Medicare Advantage»-ի (MA) ծրագիրը չեն փոխվի, երբ «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը փոխվի:

«Medicare»-ի Ձեր սպասարկողները՝

- պարտադիր չէ, որ ընդգրկված լինեն «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի ցանցում, որպեսզի շարունակեն սպասարկել Ձեզ.
- չեն կարող Ձեզնից համավճարումներ, համատեղ ապահովագրության և չապահովագրված մասի վճարումներ պահանջել, եթե Դուք «Medi-Cal»-ի անդամ եք.
- համավճարումների, համատեղ ապահովագրության և չապահովագրված մասի վճարումների համար պետք է հաշիվ ուղարկեն «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրին, եթե անգամ նրանք «Medi-Cal»-ի ցանցում ընդգրկված չեն:

«Medicare Advantage»-ի Ձեր նպաստների վերաբերյալ հարցերով զանգեք Ձեր «Medicare Advantage» ծրագրի անդամության քարտի վրա նշված համարով:

10. Ի՞նչ է «Medicare Advantage»-ի (MA) ծրագիրը:

Ոմանք իրավունակ են և՛ «Medicare»-ի, և՛ «Medi-Cal»-ի համար: Նրանք կոչվում են «կրկնակի իրավունակ» կամ «Medi-Medi» անդամներ: Ինչպես «Medicare»-ի բոլոր անդամները, կրկնակի իրավունակ անդամներն էլ կարող են խնամք ստանալ բուն «Medicare»-ի կողմից: Կամ կարող են անդամագրվել MA-ի որևէ ծրագրի: Դրանք կոչվում են «Part C» կամ «MA ծրագրեր»: California-ում MA-ի մի քանի տիպի ծրագրեր են գործում: Տերբեր շրջաններում տարբեր ծրագրեր կարելի է ընտրել:

11. Ի՞նչ տեղի կունենա, եթե ես անդամագրված եմ MA-ի որևէ ծրագրի և ապրում եմ Alameda-ի, Contra Costa-ի, Fresno-ի, Kern-ի, Kings-ի, Los Angeles-ի, Madera-ի, Orange-ի, Riverside-ի, Sacramento-ի, San Bernardino-ի, San Diego-ի, San Francisco-ի, San Mateo-ի, Santa Clara-ի, Stanislaus-ի կամ Tulare County շրջանում:

Եթե Դուք ընդգրկված եք MA-ի որևէ ծրագրում, և Ձեր շրջանում դրան **համընկնող** «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր կա, Դուք ավտոմատ կերպով կընդգրկվեք «Medi-Cal»-ի այդ համընկնող առողջապահական ծրագրում:

Վերը նշված 17 շրջաններում նահանգը «Medi-Cal»-ի համընկնող ծրագրերի կանոն է կիրառում: Դա նշանակում է, որ եթե Դուք անդամագրվում եք MA-ի որևէ ծրագրի, և Ձեր շրջանում կա «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր, որը համապատասխանում է MA-ի Ձեր ծրագրին, Դուք պետք է «Medi-Cal»-ի այդ առողջապահական ծրագիրն ընտրեք:

Եթե **չկա** «Medi-Cal»-ի համընկնող ծրագիր, կարող եք լինել MA-ի որևէ ծրագրում և «Medi-Cal»-ի՝ դրա հետ չհամընկնող որևէ առողջապահական ծրագրում: «Medi-Cal»-ի համընկնող ծրագրերի կանոնը չի փոփոխում կամ ազդում «Medicare»-ի ծրագրի Ձեր ընտրության վրա:

Երբ նույն ծրագիրը համակարգում է ինչպես Ձեր «Medicare»-ի, այնպես էլ «Medi-Cal»-ի նպաստները, համակարգումն ավելի հաջող է կատարվում: Որոշ շրջաններում այս ծրագրերն աշխատում են որպես մեկ ծրագիր: Նրանք ավելի լավ են համակարգում Ձեր «Medicare»-ի և «Medi-Cal»-ի ծառայությունները, ինչպես նաև «Medicare»-ի դեղատոմսային դեղերի ծրագիրը: Համատեղ՝ դա կոչվում է «Medicare Medi-Cal»-ի ծրագիր կամ «Medi-Medi» ծրագիր:

MA-ի Ձեր ծրագրի և «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի անունները չպետք է նույնը լինեն: Ձեր շրջանում «Medicare Medi-Cal»-ի համընկնող ծրագրերի ցուցակին կարող եք ծանոթանալ՝ այցելելով **www.healthcareoptions.dhcs.ca.gov/medi-medi-charts**:

«Medicare»-ին անդամակցելու Ձեզ հասանելի տարբերակների վերաբերյալ հարցերով զանգեք «California Health Insurance Counseling & Advocacy Program» (HICAP) 1-800-434-0222 հեռախոսահամարով (TTY՝ State Relay՝ 711) հեռախոսահամարով:

Եթե հարցեր ունեք «Medicare Advantage»-ի նպաստների վերաբերյալ, զանգահարեք MA-ի Ձեր ծրագրի անդամության քարտի վրա նշված հեռախոսահամարով:

12. Ի՞նչ է «Medicare Medi-Cal»-ի ծրագիրը:

«Medicare Medi-Cal» ծրագիրը (Medi-Medi) MA-ի ծրագիր է այն անձանց համար, որոնք ունեն **և** «Medicare», **և** «Medi-Cal»: Այն կամավոր է: Այն Ձեր «Medicare»-ի և «Medi-Cal»-ի ապահովագրությունը միավորում է **մեկ** ծրագրում, ապահովելով՝

- Համակարգված խնամք՝ մեկ թիմի կողմից:
- Նպաստների, բժիշկների, հիվանդանոցների, լաբորատոր թեստավորման, ռենտգենային ստուգումների և բժշկական որոշ սարքավորումների ընդհանուր փաթեթ: Ձեր նոր ծրագրում ընդգրկված կլինի Ձեր այժմյան բժիշկների մեծ մասը: Կամ այն Ձեզ կօգնի Ձեր պահանջները բավարարող նոր բժիշկ գտնել:
- Ապահովագրական մեկ ծրագիր՝ ծառայությունները, այդ թվում՝ բժշկական պարագաները, փոխադրումը և երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունը համակարգելու համար:
- Սպասարկողների ցանց, որում ընդգրկված են բժիշկներ, հիվանդանոցներ, կլինիկաներ, լաբորատորիաներ և սարքավորումների մատակարարներ: Ձեր նոր ծրագրում ներառված կլինի Ձեր այժմյա բժիշկների մեծ մասը, կամ Ձեզ կօգնեն նոր բժիշկներ գտնել:
- «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող նպաստներից բացի՝ հնարավոր լրացուցիչ նպաստներ, օրինակ՝ ատամնաբուժական, լսողական կամ ակնաբուժական ապահովագրություն:

Հետևյալ **12 շրջաններում** «Medi-Medi» ծրագրեր են գործելու 2024 թվականին՝ Fresno, Kings, Los Angeles, Madera, Orange, Riverside, Sacramento, San Bernardino, San Diego, San Mateo, Santa Clara և Tulare:

Ձեր շրջանում «Medi-Medi» ծրագրեր գտնելու համար այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov/medi-medi-charts**:

«Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրերի ընտրության մասին

13. «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրն առողջապահական ծրագիր է, որը՝

- իր սպասարկման տարածքում աշխատում է բժիշկների, հիվանդանոցների և այլ առողջապահական սպասարկողների հետ՝ առողջապահական ծառայություններ տրամադրելով Ձեզ:
- տրամադրում է Ձեզ «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող՝ բժշկական առումով անհրաժեշտ այն ծառայությունները, որոնց կարիքը Դուք ունեք:
- Ձեր և Ձեր սպասարկողների հետ միասին համակարգում և կառավարում է Ձեր բուժսպասարկումը:

Երբ Դուք «Medi-Cal»-ի ծրագրում լինեք, Դուք կարող եք շարունակել «Medi-Cal»-ի Ձեր ծրագրի փոխարեն՝ որոշ ծառայություններ ստանալ Fee-For-Service (FFS) «Medi-Cal»-ի միջոցով: Մեծ մասամբ՝ դրանք հետևյալներն են.

- որոշակի տնային և համայնքային ծառայություններ.
- «Medi-Cal»-ի դեղատնային ծառայությունների մեծ մասը.
- ալկոհոլի կամ թմրանյութերի հետ կապված խանգարումների (Substance use disorder) (SUD) բուժման ծառայություններ.
- ատամնաբուժական ծառայություններ:

Եթե Դուք «Medicare» ունեք, «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կարող է նաև Ձեզ այնպիսի լրացուցիչ նպաստներ տրամադրել, որոնց համար «Medicare»-ը չի վճարում, և կարող է օգնել Ձեզ «Medicare»-ի այնպիսի ծառայություններ ստանալ, ինչպիսիք են՝

- փոխադրամիջոց՝ բժշկի այցելությունների ներկայանալու համար.
- երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ.
- բժշկական պարագաներ.
- համայնքային օժանդակություն:

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի կողմից տրամադրվող նպաստների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov**:

14. Ի՞նչ է «Medi-Cal Health Care Options»-ը:

«Medi-Cal Health Care Options»-ը (HCO) ծառայություն է, որը ծրագրի անդամներին օգնում է տեղեկություններ ստանալ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի մասին: Այս ծառայության նպատակն է օգնել անդամներին, որ նրանք ճիշտ ընտրություններ կատարեն «Medi-Cal»-ի հարցում:

«Medi-Cal HCO»-ի կայքը գտնվում է **www.healthcareoptions.dhcs.ca.gov** հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

15. Ես «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի ընտրություն ունեմ:

Պարզելու համար, թե արդյոք Ձեր շրջանում մեկից ավելի ծրագիր կա, այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov**: Ավելին իմանալու համար կարդացեք 16-րդ հարցը:

16. Ինչպե՞ս «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը ընտրեմ:

«Medi-Cal»-ի Ձեզ հասանելի առողջապահական ծրագրերը երկու բանից են կախված՝

1. այն շրջանից, որտեղ Դուք ապրում եք և
2. այն բանից, թե արդյոք Դուք MA-ի որևէ ծրագրի անդամ եք:

Եթե Դուք այնպիսի մի շրջանում եք ապրում, որտեղ կարող եք «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագիր ընտրել, և Դուք MA-ի որևէ ծրագրում ընդգրկված **չեք**, Դուք 2023 թ. նոյեմբերին «*My Medi-Cal Choice*» փաթեթ կստանաք կամ արդեն ստացել եք: Դրանում նշված են «Medi-Cal»-ի Ձեզ հասանելի ծրագրերը:

Դուք կարող եք հեռախոսով անդամագրվել «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի: Զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ անդամագրվեք առցանց՝ այցելելով **www.healthcareoptions.dhcs.ca.gov**:

Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագիր չընտրեք և ընդգրկված **չլինեք** MA-ի որևէ ծրագրում, որին համապատասխանող «Medi-Cal»-ի ծրագիր գոյություն ունի Ձեր շրջանում, ապա «Medi-Cal»-ը, «Department of Health Care Services»-ը (DHCS) Ձեզ համար «Medi-Cal»-ի ծրագիր կընտրի:

Եթե Դուք MA-ի որևէ ծրագրի անդամ եք, 2024 թ. հունվարից որոշ շրջաններում «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կորոշվի MA-ի Ձեր ծրագրի համաձայն:

Դուք իրավունք ունեք ցանկացած ժամանակ փոխելու «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը: Կարող եք զանգահարել «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ անցեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov** հղումով:

Եթե Դուք ապրում եք «Միակ ծրագրով» շրջանում կամ այնպիսի մի շրջանում, որը «County-Organized Health System» (COHS) ունի, Դուք կընդգրկվեք այդ COHS ծրագրում, «Միակ ծրագրում» կամ «Kaiser Permanente»-ում:

Պարզելու համար, թե արդյոք Դուք ապրում եք COHS, Միակ ծրագրով, ոչ- (non-) COHS, թե ոչ-Միակ ծրագրով շրջանում, այցելեք **www.dhcs.ca.gov/individuals/Pages/MMCDHealthPlanDir.aspx**:

17. Կարո՞ղ եմ ես անդամագրվել «Kaiser Permanente»-ին:

Դուք կարող եք «Kaiser Permanente»-ի անդամ դառնալ, եթե ապրում եք այն շրջաններից մեկում, որտեղ «Kaiser Permanente»-ն գործում է որպես «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր:

Բացի այդ, Դուք պետք է բավարարեք ստորև բերված պահանջներից **մեկը**.

- Դուք «Kaiser Permanente»-ի անդամ եք եղել վերջին 12 ամսվա ընթացքում կամ
- Դուք «Kaiser Permanente»-ի ներկա անդամի հետ նույն տանը բնակվող՝ ընտանիքի անմիջական անդամ եք (ընտանեկան կապ), այդ թվում՝
 - նրա կինը/ամուսինը կամ կողակիցն եք,
 - նրա խնամքի տակ գտնվող մինչև 26 տարեկան երեխա եք,
 - նրա խորթ երեխան եք, որի 26 տարին չի լրացել,
 - նրա խնամքի տակ գտնվող 21 տարեկանը բոլորած հաշմանդամ եք,
 - մինչև 26 տարեկան նպաստառուի ծնողը կամ խորթ ծնողն եք կամ
 - մինչև 26 տարեկան նպաստառուի տատը/պապը, խնամակալը, հոգեծնողը կամ այլ ազգականն եք և ընտանեկան կապը ցույց տվող համապատասխան փաստաթուղթ ունեք կամ
- Դուք հոգեզավակ եք կամ
- ունեք և՛ «Medicare», և՛ «Medi-Cal» (կրկնակի իրավունակ եք):

«Kaiser Permanente»-ին անդամագրվելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

18. Ես կարող եմ ընդգրկվել «Program of All-Inclusive Care for the Elderly» (PACE) ծրագրում:

Եթե Դուք 55 տարեկան կամ ավելի մեծ եք և տանն ապրելու համար ավելի բարձր մակարդակի խնամքի կարիք ունեք, հնարավոր է, որ իրավունակ լինեք մասնակցելու Ձեր տարածքում գործող որևէ PACE ծրագրի:

PACE-ը Ձեզ բժիշկների, բուժքույրերի, թերապևտների, վարորդների, տնային խնամողների, սոցիալական աշխատողների, գործողությունները համակարգողների և սննդաբույժների պրոֆեսիոնալ խումբ է տրամադրում: Նրանք կհամակարգեն Ձեր բուժսպասարկումը, տնային խնամքը, փոխադրումները և մասնագիտացված օգնությունը՝ ինչպես ատամնաբուժական օգնությունը և լսողական սարքերը:

PACE-ի միջոցով ստացած խնամքի մեծ մասը PACE-ի կենտրոններում է տրամադրվում: Դուք կարող եք նաև մասնակցել նրանց սոցիալական ծրագրերին և օգտվել տարեց անձանց համար նախատեսված նրանց մարզասրահներից: Երբեմն Ձեզ խնամող խումբը ծառայությունները Ձեր տանն է մատուցում:

Եթե Դուք որոշեք PACE-ի որևէ ծրագրի անդամագրվել և «Medicare» ունենաք, «Medicare»-ի Ձեր սպասարկողները կարող են փոխվել: Բացի այդ, PACE-ի որևէ ծրագրում ընդգրկվելուց հետո Դուք դուրս կհանվեք MA-ի Ձեր ծրագրից: Դուք չեք կորցնի «Medicare» դեղերի Ձեր ապահովագրությունը:

PACE-ին անդամագրվելը կամավոր է: Դուք կարող եք ցանկացած ժամանակ դուրս գալ ծրագրից: PACE-ին անդամագրվելը ենթադրում է դիմելու և դիմումի քննարկման գործընթաց: Այն ներառում է առողջության գնահատում: Դա արվում է պարզելու համար, թե ինչ տեսակի խնամք է Ձեզ հարկավոր: Այս գործընթացը կարող է մի քանի շաբաթ տևել: Եթե Դուք «Medi-Cal» ունեք, ապա PACE-ին անդամագրվելն այլ համավճարումներ կամ չապահովագրված մասի վճարումներ չի պահանջում:

PACE-ի ծառայությունները ներառում են, բայց ոչ միայն՝

- բժշկի և մասնագետի այցելություններ.
- հիվանդանոցային խնամք և վիրահատություններ.
- շտապ և հրատապ բուժօգնություն.
- ակնաբուժական և ատամնաբուժական ծառայություններ.
- դեղատոմսային դեղեր.
- ֆիզիոթերապիա, աշխատաբուժություն և խոսքաբուժություն.
- տնային բուժօգնություն.
- վարքաբուժական ծառայություններ.
- սարքավորումներ և բժշկական պարագաներ.
- փոխադրամիջոց PACE-ի կենտրոններ և բժշկի ժամադրությունների գնալու և վերադառնալու համար.
- խորհրդատվություն սննդամթերքի հարցերով և պատրաստի կերակուրներ.
- ծերանոցային խնամք:

Ձեր շրջանում PACE-ի հասանելիության մասին տեղեկանալու կամ PACE-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար անցեք **www.CalPACE.org** հղումով: Կամ զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

19. Կարող եմ ես անդամագրվել SCAN առողջապահական ծրագրին:

Դուք կարող եք իրավունակ լինել Ձեր տարածքում գործող SCAN առողջապահական ծրագրի (SCAN) համար, եթե Դուք՝

- 65 տարեկան կամ ավելի մեծ եք,
- ունեք «Medicare» A և B,

- ունեք «Medi-Cal» և
- ապրում եք Los Angeles-ի, Riverside-ի, San Bernardino-ի կամ San Diego-ի շրջանում:

SCAN-ը «Medicare Advantage» Special Needs Plan է: Այն տրամադրում է «Medicare»-ի ու «Medi-Cal»-ի նպաստները, այդ թվում՝ դեղատոմսային դեղերին: Այն համակարգում է ամբողջ բուժսպասարկումը, տնային խնամքը, փոխադրումները և դրանց հետ առնչվող ծառայությունները: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք SCAN՝ 1-800-675-4439 (TTY՝ 711) հեռախոսահամարով: Կամ անցեք **www.scanhealthplan.com** հղումով:

20. Ո՞վ պարտավոր չէ անդամագրվել «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի:

Հնարավոր է, որ Դուք ստիպված չլինեք անդամագրվելու «Medi-Cal» առողջապահական ծրագրերին, եթե ապրում եք ոչ-COHS կամ ոչ-Միակ ծրագրով շրջանում, ապա և՛

- American Indian/Alaska Native եք.
- այնպիսի մի անդամ եք, որը ծառայություններ է ստանում հոգեզավակների խնամքի ծրագրով, «Adoption Assistance Program» ծրագրով կամ «Child Protective Services»-ով.
- California Veteran's-ի տանն եք ապրում.
- արդեն ունեք բժշկական պատճառով հաստատված ազատում «Medi-Cal»-ի ծրագրերին անդամակցելու պարտավորությունից կամ
- բժշկական պատճառով ազատվում եք «Medi-Cal»-ի որևէ ծրագրի անդամակցելու պահանջից:

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերին անդամագրվելուց ազատվելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

Եթե Դուք այնպիսի մի անդամ եք, որն օգնություն է ստանում հոգեզավակների խնամքի, «Adoption Assistance Program»-ի կամ «Child Protective Services»-ի միջոցով և ապրում եք «Միակ ծրագրով» շրջանում, Դուք կարող եք անդամագրվել կա՛մ «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի, կա՛մ FFS «Medi-Cal»-ին:

Պարզելու համար, թե արդյոք Դուք ապրում եք COHS, Միակ ծրագրով, ոչ-COHS, թե ոչ-Միակ ծրագրով շրջանում, այցելեք **www.dhcs.ca.gov/individuals/Pages/MMCDHealthPlanDir.aspx**:

21. Իսկ եթե ես American Indian կամ Alaska Native Անդամ անդամ եմ:

Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում ընդգրկված American Indian կամ Alaska Native անդամ եք, ապա կարող եք ծառայություններ ստանալ Ձեր նախընտրած Indian Health Care մատակարարից: Եթե հարցեր ունեք Ձեր նպաստների մասին, զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիր կամ «Medi-Cal Ombudsman»-ին՝ 1-888-452-8609 հեռախոսահամարով:

22. Կարո՞ղ եմ ես բժշկական պատճառով ազատվել «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի անդամագրումից:

Եթե Դուք ապրում եք COHS կամ Միակ ծրագրով շրջանում, ապա իրավունակ չեք բժշկական պատճառով ազատվելու:

Եթե ապրում եք ոչ-COHS, ոչ-Միակ ծրագրով շրջանում և FFS «Medi-Cal»-ում եք, ապա կարող եք իրավունակ լինել բժշկական պատճառով ազատման, որպեսզի մինչև **12 ամիս** պահեք Ձեր սպասարկողին, եթե որևէ բարդ առողջական խնդիր ունեք և «Medi-Cal»-ի Ձեր բժիշկը կամ կլինիկական FFS «Medi-Cal»-ի սպասարկող է, որն ընդգրկված չէ «Medi-Cal»-ի Ձեր շրջանում գործող որևէ առողջապահական ծրագրի ցանցում:

Եթե ցանկանում եք FFS «Medi-Cal»-ում մնալ, հնարավորին չափ շուտ դիմեք բժշկական պատճառով ազատում ստանալու համար: Մեծ մասամբ՝ «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում **90 օր** գտնվելուց հետո, Դուք այլևս չեք կարող ազատվել կառավարվող բուժսպասարկման ծրագրերին անդամագրվելու պարտավորությունից: Ձեր բժիշկը, կլինիկական կամ որևէ փաստաբան կարող է օգնել Ձեզ լրացնել ձևաթուղթը: Ձևաթղթի մի մասը պիտի Ձեր բժիշկը լրացնի: Լրացված ձևաթուղթն ուղարկեք «Medi-Cal HCO»:

«Medicare»-ի Ձեր սպասարկողներին պահելու համար Ձեզ անհրաժեշտ **չէ** բժշկական պատճառով ազատում ստանալ:

Բժշկական պատճառով ազատման համար դիմելու երկու եղանակ կա.

1. Զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:
2. Այցելեք «Medi-Cal HCO»-ի կայքը՝ **www.healthcareoptions.dhcs.ca.gov** հասցեով:

Եթե բժշկական պատճառով ազատման Ձեր հայցը բավարարվի, կարող եք մնալ FFS «Medi-Cal»-ում և պահել Ձեր բժշկին մինչև Ձեր բժշկական պատճառով ազատման ժամկետի ավարտը:

Որոշակի առողջական խնդիրների դեպքում՝ եթե Դուք ցանկանում եք ավելի քան 12 ամիս պահել «Medi-Cal»-ի Ձեր սպասարկողին, հնարավոր է, որ Դուք իրավունք ունենաք բժշկական պատճառով ազատման ժամկետի

երկարաձգում խնդրելու: Ազատման նոր հայց ներկայացնելու համար հարկավոր է բժշկական պատճառով Ձեր ներկա ազատման սկսվելու օրվանից առնվազն **11 ամիս** սպասել: Երբ Ձեր ներկա ազատման ժամկետի ավարտին 45 օր մնա, «Medi-Cal HCO»-ն Ձեզ տեղյակ կպահի այդ մասին: Նրանք Ձեզ կտեղեկացնեն, թե ինչպես ժամկետի երկարաձգում խնդրել:

Եթե ազատման Ձեր դիմումը մերժվի, հնարավոր է, որ Դուք կարողանաք պահել Ձեր բժշկին, եթե «Medi-Cal»-ի Ձեր ծրագրից «չընդհատվող բուժապասարկում» խնդրեք:

Բժշկական պատճառով ազատում ստանալու տարբերակների և ազատման հայց ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ այցելեք «Medi-Cal HCO»-ի կայքը՝ **www.healthcareoptions.dhcs.ca.gov** հասցեով:

Պարզելու համար, թե արդյոք Դուք ապրում եք COHS, Միակ ծրագրով, ոչ-COHS, թե ոչ-Միակ ծրագրով շրջանում, այցելեք **www.dhcs.ca.gov/individuals/Pages/MMCDHealthPlanDir.aspx** :

23. Եթե ես մինչև 2024 թ. հունվարի 1-ը բժշկական պատճառով հաստատված ազատում ունենամ, ես կմնամ FFS-ում:

Եթե բժշկական պատճառով Ձեր ազատումը հաստատվել է մինչև 2024 թ. հունվարի 1-ը, դուք կմնաք FFS-ում, մինչև բժշկական պատճառով Ձեր հաստատված ազատման ժամկետն ավարտվի, և Ձեզ համար բժշկական առումով ապահով լինի ընդգրկվել «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում:

- Բժշկական պատճառով ազատման դիմումը (Medical Exemption Request) (MER) Ձեզ հնարավորություն է տալիս մինչև ազատման ժամկետի ավարտը մնալ «Medi-Cal» FFS-ում: Մինչև բժշկական պատճառով Ձեր ազատման ժամկետի ավարտը Դուք նամակ կստանաք:
- Եթե կարծում եք, որ Ձեր առողջական վիճակը շարունակում է բավարարել ազատման պահանջները, կարող եք բժշկական պատճառով ազատման ժամկետի երկարաձգում խնդրել: Եթե ցանկանում եք ազատման հայց ներկայացնել, պետք է բժշկական պատճառով Ձեր ներկա ազատման սկսվելու օրվանից առնվազն **11 ամիս** սպասեք: Երբ բժշկական պատճառով ազատման ժամկետն ավարտվի, «Medi-Cal HCO»-ն Ձեզ տեղեկություններ կտրամադրի «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի անդամագրվելու մասին:
- 2024 թ. հունվարի 1-ից COHS կամ Միակ ծրագրով շրջաններում ապրողներն իրավունակ չեն լինի բժշկական պատճառով ազատման ժամկետի երկարաձգման համար:

«Medi-Cal»-ի միջոցով տրամադրվող այլ ծառայությունները

24. Ուրիշ ինչ ծառայություններ կարող են ես ստանալ «Medi-Cal»-ի միջոցով:

«California Children's Services» (CCS) ծրագիրը

Հնարավոր է, որ Դուք կամ Ձեր երեխան իրավունակ լինեք CCS ծրագրում ընդգրկվելու: CCS-ը որոշակի առողջական խնդիրներ, ֆիզիկական սահմանափակումներ կամ քրոնիկական հիվանդություններ ունեցող երեխաների և պատանիների համար նախատեսված նահանգային ծրագիր է: Մինչև 21 տարեկան երեխաները և պատանիները կարող են ստանալ իրենց անհրաժեշտ բուժօգնությունը և ծառայությունները: CCS-ը երեխային կամ պատանուն կկապի այն բժիշկների կամ հատուկ պատրաստություն անցած բուժաշխատողների հետ, որոնք գիտեն, թե ինչ է հարկավոր անել նրանց առողջական խնդիրների դեպքում:

Երեխան կամ պատանին կարող է իրավունակ լինել CCS ծրագրի համար, եթե այդ երեխան կամ պատանին՝

- 21 տարեկան չկա,
- CCS-ի իրավունակություն տվող առողջական խնդիր ունի՝
<https://www.dhcs.ca.gov/services/ccs/Pages/medicaleligibility.aspx>,
- California-ի բնակիչ է, և
- որի ընտանեկան եկամուտը \$40,000-ից ցածր է:

Ավելին իմանալու համար գտեք Ձեր տեղական CCS ծրագրի հեռախոսի համարը՝ այցելելով <https://www.dhcs.ca.gov/services/ccs/Pages/CountyOffices.aspx>:

Ատամնաբուժական ծառայությունները

«Medi-Cal»-ի միջոցով Դուք կարող եք ատամնաբուժական ծառայություններ ստանալ: Երբ Դուք անդամագրվում եք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի, Ձեր ատամնաբուժական նպաստները չեն փոխվում:

- **Շրջանների մեծ մասում** Դուք FFS «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծառայություններ եք ստանում **«Medi-Cal Dental» ծրագրի** միջոցով: Դուք պետք է այցելեք «Medi-Cal Dental»-ի հետ համագործակցող որևէ ատամնաբուժական ծառայություններ տրամադրողի: Ատամնաբուժական սպասարկող գտնելու համար կարող եք զանգահարել «Medi-Cal Dental»-ի հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-800-322-6384 (TTY՝ 1-800-735-2922) հեռախոսահամարով՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը:

Դուք ատամնաբուժական սպասարկող և «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել նաև «Smile, California» կայքում՝ www.smilecalifornia.org հասցեով:

- Եթե Դուք ապրում եք **Los Angeles-ի շրջանում**, կարող եք ծառայությունները ստանալ **«Medi-Cal Dental» ծրագրի** միջոցով՝ FFS ատամնաբուժական ծրագրով կամ **«Medi-Cal Dental»-ի** որևէ **կառավարվող բուժսպասարկման ծրագրով**: Ատամնաբուժական ծրագրերին անդամագրվելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:
- Եթե Դուք ապրում եք **San Mateo-ի շրջանում**, Դուք ատամնաբուժական ծառայություններ կստանաք «Health Plan of San Mateo»-ի (HPSM) կամ FFS-ի միջոցով:
 - Եթե Դուք ընդգրկված եք HPSM-ում, Դուք ատամնաբուժական ծառայություններ կստանաք HPSM-ի միջոցով: HPSM-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-750-4776 (TTY՝ 1-800-735-2929) հեռախոսահամարով:
 - Եթե Դուք «Kaiser»-ի անդամ եք, Դուք ատամնաբուժական ծառայություններ կստանաք ատամնաբուժական FFS-ի միջոցով: Ատամնաբուժական սպասարկող գտնելու համար կարող եք զանգահարել ատամնաբուժական «Medi-Cal»-ի հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-800-322-6384 (TTY՝ 1-800-735-2922) հեռախոսահամարով՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը:

«In-Home Supportive Services» (IHSS) ծրագիրը

IHSS ծրագիրն օգնում է Ձեզ վճարել այն ծառայությունների համար, որոնց օգնությամբ Դուք կարողանում եք ապահով կերպով ապրել Ձեր տանը: IHSS-ը տնից դուրս խնամքի, օրինակ՝ ծերանոցների կամ գիշերօթիկ խնամքի ծառայությունների այլընտրանք է: IHSS-ը վճարում է հետևյալ տեսակի ծառայությունների համար.

- տուն հավաքել,
- կերակուր պատրաստել,
- լվացք անել,
- մթերքներ գնել,
- անձնական խնամքի ծառայություններ, օրինակ՝ աղիքների և միզապարկի դատարկում, լոգանք, հարդարանք և հարաբժշկական ծառայություններ,
- ուղեկցություն բժշկական այցելությունների,

- հոգեկան խնդիրներ ունեցողների պաշտպանական հսկողություն:

IHSS-ի համար կարող եք դիմել՝ զանգահարելով սոցիալական ծառայությունների գործակալության Ձեր շրջանի տեղական գրասենյակ: Ձեր շրջանի տեղական գրասենյակը գտնելու համար այցելեք

www.cdss.ca.gov: Շրջանի որևէ սոցիալական աշխատող կայցելի Ձեր տուն և հարցազրույց կունենա Ձեզ հետ՝ պարզելու համար, թե արդյոք Դուք իրավունակ եք IHSS-ի համար և դրա կարիքն ունեք: Ելնելով այն բանից, թե Դուք որքան եք կարողանում ինքնուրույն կատարել որոշակի գործողություններ, սոցիալական աշխատողը կպարզի, թե ինչ տեսակի ծառայությունների կարիք ունեք Դուք, և այն ժամերի քանակը, որ շրջանը կարող է արտոնել այդ ծառայությունների տրամադրման համար:

Եթե Դուք IHSS-ի արտոնություն ստանաք, ապա շրջանների մեծ մասում Դուք պետք է վարձեք որևէ մեկին (Ձեր անհատական սպասարկողին), որը կտրամադրի այդ արտոնված ծառայությունները: Ձեր շրջանի IHSS-ի Public Authority-ն կարող է օգնել Ձեզ IHSS-ի որակավորված սպասարկողներ գտնելու հարցում:

Հոգեկան առողջության ծառայությունները

Եթե Ձեզ հոգեկան առողջության ծառայություններ են անհրաժեշտ, խոսեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժնի աշխատակիցների հետ: Կամ խոսեք Ձեր PCP-ի կամ շրջանի հոգեկան առողջության ծրագրի հետ: Դուք կարող եք հոգեկան առողջության ծառայություններ ստանալ «Medicare»-ի կամ «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի ցանցի միջոցով: Դուք կարող եք նաև իրավունակ լինել Ձեր շրջանի հոգեկան առողջության ծրագրից հոգեկան առողջության ծառայություններ ստանալու:

«Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը և Ձեր շրջանի հոգեկան առողջության ծրագիրը **պետք է** օգնեն Ձեզ Ձեր հոգեկան առողջության խնդիրների հարցում: Նրանք պետք է օգնեն Ձեզ սպասարկող գտնել: Ձեր շրջանի հոգեկան առողջության ծրագրի կոնտակտային տվյալների համար այցելեք **www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx**:

Անկախ այն բանից, թե որին կդիմեք, Դուք պետք է անմիջապես ծառայություններ ստանաք: Օգնություն ստանալու համար ախտորոշում անհրաժեշտ չէ:

Ալկոհոլի և թմրանյութերի հետ կապված խանգարումների բուժման ծառայությունները

Եթե Ձեզ օգնություն է հարկավոր ալկոհոլի և այլ թմրանյութերի հետ կապված խանգարումների (SUD) բուժման ծառայություններ ստանալու հարցում, «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կարող է գնահատում կատարել: SUD-ի բուժման ծառայությունների համար կարող եք նաև զանգահարել Ձեր շրջանի Թմրադեղերի «Medi-Cal» ծրագիր: Ձեր

շրջանի տեղական Թմրադեղերի «Medi-Cal» ծրագիրը գտնելու համար այցելեք www.dhcs.ca.gov/provgovpart/Pages/sud-directories.aspx: Կամ զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին և օգնություն ստացեք SUD-ի բուժում ստանալու հարցում:

Դեղատան ծառայությունները

«Medi-Cal Rx»-ը վճարում է այն դեղատոմսային դեղերի համար, որոնք Ձեր սպասարկողը նշանակում է Ձեզ, որպեսզի Դուք դրանք վերցնեք դեղատնից: «Medi-Cal»-ի Ձեր ծրագիրը վճարում է այն դեղերի համար, որոնք Ձեր սպասարկողն անձամբ տալիս է Ձեզ, ասենք՝ բժշկի մոտ գտնված ժամանակ կամ կլինիկայում:

«Medi-Cal Rx»-ի դեղատոմսային դեղերի ապահովագրության և «Medi-Cal» ընդունող դեղատների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.medi-calrx.dhcs.ca.gov: Կամ զանգահարեք «Medi-Cal Rx»-ի հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-800-977-2273 (TTY՝ State Relay՝ 711) հեռախոսահամարով: Զանգահարելիս պատրաստ ունեցեք «Medi-Cal»-ի Ձեր նպաստների նույնականացման քարտի (Benefits Identification Card) (BIC) համարը:

Եթե «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո հարցեր ունենաք, զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին:

Եթե Դուք «Medicare»-ի իրավունակություն ունեք, ապա «Medicare Part D»-ն կվճարի դեղերի մեծ մասի համար: Դուք պետք է վճարեք սահմանված համավճարումները: «Medi-Cal»-ը կվճարի միայն «Part D» ծրագրում չընդգրկված դեղամիջոցների համար:

Փոխադրումները

Եթե Դուք բժշկին, կլինիկա, ատամնաբույժին, հոգեկան առողջության կամ ոգելից խմիչքների կամ թմրանյութերի հետ կապված խանգարումների բուժման վայր Ձեզ նշանակված ժամադրությանը ներկայանալու, Ձեր դեղերը վերցնելու կամ «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող որևէ այլ ծառայության տրամադրման վայր գնալու հնարավորություն չունեք, ապա Դուք կարող եք իրավունակ լինել անվճար փոխադրման ծառայություններ ստանալու համար: Այդ ծառայությունները, որոնք կոչվում են «Non-Medical Transportation» (NMT), Դուք կարող եք ստանալ ավտոմեքենայով, տաքսիով, ավտոբուսով կամ որևէ այլ հանրային կամ մասնավոր փոխադրամիջոցով: NMT-ն տրամադրվում է «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող, ինչպես նաև «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող բայց ոչ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի միջոցով տրամադրվող ժամադրություններին, օրինակ՝ ակոհոլի կամ թմրանյութերի հետ կապված խանգարումների բուժման ծառայություններ ստանալու նպատակով

կատարվող այցելություններին ներկայանալու համար:

Եթե առողջական վիճակի պատճառով Դուք չեք կարող օգտվել ավտոմեքենայից, ավտոբուսից, տաքսուց կամ որևէ այլ հանրային կամ մասնավոր փոխադրամիջոցից՝ Ձեզ նշանակված ժամադրությանը ներկայանալու համար, ապա կարող եք «Non-Emergency Medical Transportation»-ի (NEMT) ծառայություններ ստանալ և Ձեր ժամադրությանը ներկայանալ շտապ օգնության մեքենայով, պառկած կամ անվասայլակով անձանց համար հարմարեցված միկրոավտոբուսով: NEMT պատվիրելու համար Դուք պետք է որևէ հավաստագրված սպասարկողի կողմից տրված կարգադրագիր ունենաք: NEMT-ն այն անձանց համար է, որոնք չեն կարող օգտվել հանրային կամ մասնավոր փոխադրամիջոցներից: Նման կարգադրագիր կարող է տալ Ձեր նախնական բուժօգնության սպասարկողը, ատամնաբույժը, ուրթի բժիշկը, ինչպես նաև հոգեկան առողջության կամ կախվածության հետ կապված խանգարումը բուժող սպասարկողը:

«Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կարող է օգնել Ձեզ փոխադրամիջոցի տրամադրման ժամերի հարցում: Փոխադրման ծառայություն պատվիրելու համար զանգահարեք «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին:

Եթե Ձեզ փոխադրում է անհրաժեշտ լինելու, Դուք պետք է ժամադրությունից առաջ որքան հնարավոր է շուտ կապվեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի հետ: Եթե դուք բազմաթիվ ժամադրություններ ունեք, կարող եք նաև փոխադրում պատվիրել այդ ժամադրություններին ներկայանալու համար:

Կոնտակտային տվյալները

25. Որտեղի՞ց կարող եմ ավելին իմանալ կամ օգնություն ստանալ:

«Medi-Cal»-ի մասին հարցերի դեպքում՝

- Զանգահարեք DHCS «Medi-Cal»-ի Օգնության հեռախոսագծին՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 5-ը՝ 1-800-541-5555 համարով: Զանգն անվճար է:
- Որպեսզի ավելին իմանաք այն մասին, թե ինչ ծառայություններ կարող եք ստանալ «Medi-Cal»-ի միջոցով, այցելեք **www.dhcs.ca.gov**: Կամ զանգահարեք «Medi-Cal»-ի վերը նշված օգնության հեռախոսագծին:

Եթե հարցեր ունեք
այն մասին, թե ինչու
են «Medi-Cal»-ի
Ձեզ տրամադրվող
ծառայությունները
փոփոխվում՝

- Զանգահարեք «Medi-Cal Ombudsman Office»՝
երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը
8-ից երեկոյան ժամը 5-ը՝ 1-888-452-8609
(TTY՝ California State Relay՝ 711)
հեռախոսահամարով: Զանգն անվճար է: ուղարկեք
էլփոստով՝ **MMCDOmbudsmanOffice@dhcs.ca.gov**
հասցեին:

Նա օգնում է «Medi-Cal» ունեցող անձանց
օգտվել իրենց նպաստներից և իմանալ իրենց
իրավունքներն ու պարտականությունները:

- Զանգահարեք «Medicare Medi-Cal Ombudsman
Program»՝ 1-855-501-3077 համարով: Զանգն
անվճար է: Գանգատների և խնդիրների
դեպքում՝ նրանք օգնում են Ա՝ «Medicare», Ա՝
«Medi-Cal» ունեցող անձանց:

- Զանգահարեք Long-Term Care Ombudsman-ին՝
1-800-231-4024 հեռախոսահամարով:
Հեռախոսագիծը գործում է օրը 24 ժամ,
շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Նա
օգնում է Մասնագիտացված խնամքի
հաստատությունում, Միջանկյալ խնամքի
հաստատությունում և Ենթասուր խնամքի
հաստատությունում բնակվող անձանց, եթե
նրանք գանգատներ ունեն, և բացատրում
է վերջիններիս իրենց իրավունքներն ու
պարտականությունները:

- Զանգահարեք «Health Consumer Alliance»՝
1-888-804-3536 հեռախոսահամարով:
Զանգն անվճար է: Կամ անցեք **https://
healthconsumer.org** հղումով:

Առողջապահական
ծրագրերի և
սպասարկողների
(բժիշկների,
կլինիկաների)՝
Ձեզ հասանելի
տարբերակների
մասին լրացուցիչ
տեղեկությունների
համար՝

- Զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի -
ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից
մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032
(TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:
Զանգն անվճար է: Կամ այցելեք մեր կայքը՝
www.healthcareoptions.dhcs.ca.gov: